«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Դպրոցի անվանումը՝ «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Դպրոցի հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Դպրոցականների փողոց 9:

Գրանցման համարը՝ 69.210.00210, գրանցվել է 2003 թվականի հունվարի 30:

ՀՎՀՀ՝ 07201616

Դպրոցն իրականացնում է տարրական և հիմնական կրթական ծրագրեր, սկսած 2013 թվականից, մինչ այդ եղել է միջնակարգ դպրոց:

Լիցենզիայով տարրականհանրակրթական ծրագրի իրականացման համար տրվել է 280 սահմանային տեղ, իսկ հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման համար՝ 440 սահմանային տեղ, սակայն ներկայումս անհամեմատ ցածր է կրթություն ստացող սովորողների թիվը՝ տարրական դպրոցում 170 աշակերտ, իսկ հիմնական դպրոցում ՝ 249 աշակերտ:

Դպրոցում դասավանդում են 28 ուսուցիչներ:

Դպրոցի շենքը կառուցվել է և հանձնվել շահագործման 1969 թվականին, նախագծային հզորությունը նախատեսված է 700 սովորողի համար:

Դպրոցը մարզային ենթակայության է՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ:

Դպրոցի պաշտոնական կայքը՝ https://tashir1himn.schoolsite.am/

Դպրոցի էլփոստը՝ tashir4@yandex.com:

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի շենքը տիպային է և կառուցվել է 1969 թվականին, որը բաղկացած է 4 մասնաշենքերից՝ մեկը եռահարկ, մեկը երկհարկ, մեկ մասնաշենքում նիստերի դահլիճն ու սպորտդահլիճն են, իսկ մեկ մասնաշենքում էլ ամբողջությամբ ճաշարան է: Դպրոցն ունի բացօթյա մարզահրապարակ, արհեստանոց, ջեռուցման անհատական համակարգ, մշտական ջրամատակարարում, ինտերնետ կապ:

Դպրոցում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ եռահարկ մասնաշենքի տանիքը վերանորոգվել է 2007թ, փոխարինվել են նաև պատուհանները,
- ✓ Դպրոցի ներսում վերանորոգման աշխատանքներ իրականացվել են 2012թ
- ✓ Մասնաշենքում առկա 15 դասասենյակներից 5-ը չի օգտագործվում /գտնվում են մասնաշենքի երրորդ հարկում/:
- ✓ Մասնաշենքի երրորդ հարկը գնահատվել է 2-րդ աստիճանի վթարային և այնտեղ դասապրոցես չի իրականացվում:
- ✓ Մասնաշենքում առկա է 5 սանհանգույց՝ 2-ը նախատեսված է տղաների, 2-ը՝ աղջիկների և 1-ը՝ ուսուցիչների համար: Սանհանգույցները ունեն հիմնանորոգման կարիք:
- ✓ Դասասենյակներում 2019թ. անցել են կոսմետիկ վերանորոգում, ներկվել է հատակը, պատերը, իսկ 1 դասասենյակի հատակը հիմնովին վերակառուցվել է:
- ✓ Մասնաշենքում առկա է գրադարան, տնային թատրոն, նախնական զինվորական պատրաստության դասասենյակ, բուժկետ, ուսուցչանոց, համակարգիչների սենյակ:

Երկհարկանի մասնաշենքն ունի 9 դասասենյակ, 1 ուսուցչանոց, շախմատի սենյակ, գրադարան: Մասնաշենքի տանիքը վերանորոգվել է 2012թ., 2019թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում հիմնովին վերանորոգվել են 8 դասասենյակներ, 1 դասասենյակի հատակն ամբողջությամբ փոխարինվել է: Մասնաշենքի ներսի հատվածի աստիճանները սալիկապատված են:

3-րդ մասնաշենքում է գտնվում նիստերի դահլիճը, սպորտդահլիճը և երկու հանդերձարանները, որոնք գտնվում են անմխիթար վիճակում: Նիստերի դահլիճը 1969թ. ից երբևէ չի վերանորոգվել, սպորտդահլիճը վերանորոգվել է 2006թ., իսկ հանդերձարանները հիմնովին վերանորոգել է 2022թ.:

4-րդ մասնաշենքում գտնվում է ճաշարանը, որը 2021թ. մայիս ամսվա ընթացքում հիմնանորոգվել է, ճաշարանի տանիքն ամբողջությամբ փոխարինվել է /430 մ^2 մակերեսով/,

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, Т-աձև, П-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Iա	50,4	2,6	շարքերով	9	120-150սմ
Iբ	50,4	2,6	շարքերով	12	120-150սմ
IIա	50,4	2,4	շարքերով	11	120-150սմ
IIբ	34	2,4	շարքերով	10	120-150սմ
IIIա	50,4	2	շարքերով	9	120-150սմ
IIIբ	50,4	2,5	շարքերով	11	120-150սմ
IVա	50,4	2,8	շարքերով	12	120-150սմ
IVբ	50,4	2,3	շարքերով	12	120-150սմ
Vա	50,4	1,8	շարքերով	13	120-150սմ
Vբ	50,4	1,7	շարքերով	10	120-150սմ
VIա	33,3	1,6	շարքերով	11	120-150սմ
VIբ	33,5	1,3	շարքերով	12	120-150սմ
VIIա	49,9	2,5	շարքերով	14	120-150սմ
VIIբ	49,3	2,2	շարքերով	15	120-150սմ
VIIIա	49,3	2,5	շարքերով	9	120-150սմ
VIIIբ	48,7	2,5	շարքերով	14	120-150սմ
IXա	50,4	1,5	շարքերով	17	100-110սմ

Դպրոցն ապահովված շուրջօրյա խմելու ջրով, սանհանգույցներում սանիտարահիգենիկ վիճակը բավարար է:

Շենքի հարկը	Սանհան գույցների թիվը	Աղջիկների սան-հանգույցի առկայությունը	Տղաների սան-հանգույցի առկայությունը	Հիգիենայի պարագաների առկայությունը	Հարմարեցվածությունը հաշմանդամությունունեցող անձանց կարիքներին	Վերանորոգված են, թե ոչ
1-ին հարկ	5	այո	այո	այո	այո	ոչ

Դպրքցը ջեռուցվում է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով, և ապահովվում է անհրաժեշտ ջերմաստիճան՝

Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը)	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը
Դասասենյակներ	գազ	17-19	շուրջօրյա
Մարզադահլիճ	չի ջեռուցվում	-	-
Միջոցառումների դահլիճ	չի ջեռուցվում	-	-
Ուսուցչանոց	գազ	18	շուրջօրյա
Ճաշարան	գազ	18	-
I-ին հարկի միջացքներ	չի ջեռուցվում	-	-

ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով դպրոցում գործում է 136 քառակուսի մետր մակերեսով վերակառուցված ճաշարան, որտեղ կարող են սնվել շուրջ 150 երեխաներ: Ճաշարանն ապահովված է տաք և սառը հոսող ջրով, առկա են լվացարաններ և հիգենիայի անհրաժեշտ պարագաներ: Տրվում է տաք սնունդ:

Դպրոցն ունի բուժքույր և բուժկետ, որը գտնվում է դպրոցի 1-ին հարկում, բուժկետը մասնակի վերանորոգված է, սանիտարական վիճակը լավ, առկա պարագաները կարիք ունեն համալրման:

Դպրոցն ունի գրադարան 54,6 քառակուսի մետր մակերեսով, որտեղ առկա է շուրջ 2500 անուն գիրք, գրականություն, գրադարանային ֆոնդի համալրումներն

իրականացվում են ուշ-ուշ: Գրադարանը վերանորոգված չէ, չնայած առկա է համակարգիչ, բացակայում են էլեկտրոնային ռեսուրսները:

Դպրոցում առկա են նաև հետևյալ ենթակառուցվածքները՝

Առարկայական կաբինետներ	Տարածքը (ք.մ)	Վերանորոգ-ման կարիքը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորում-ները, պարագաները	Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը	Լրացուցիչ, գույքի, սարքա վորումների, պարագաներ ի նյութերի կարիքը
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	50,4	կա	չկա	առկա	կա
Ռազմագիտության կաբինետ	40,7	կա	մասնակի	առկա	կա
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	35	կա	առկա բավ.	առկա	կա
Միջոցառումների դահլիճ	180	Հիմնա-նորոգման կարիք			կա
Մարզադահլիճ	180	Հիմնա-նորոգման կարիք		առկա	կա

	ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Դպրոցի տարածքը հեռացված է ճանապարհային գոտուց, և ցանկապատված է	Սանհանգույցները կարքի ունեն վերանորոգման
2	Դպրոցի տարածքում սովորողների կողմից պարբերաբար իրականացվում են մաքրման աշխատանքներ, տարածքը խնամված է	Հանդիսությունների դահլիճը ևս վերանորոգված չէ
3	Դպրոցում առկա է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա	Լաբորատորիաները չեն գործում

4	Հրշեջ մեքենաներն ըստ նահրաժեշտության կարող են մոտենալ դպրոցի շենքին	Դասարաններում չկան ՏՀՏ միջոցներ
5	Դպրոցի առաջին մասնաշենիք տանիքն ամբողջությամբ փոխարինված է	Դպրոցի բակը ենթակա է կանաչապատման
6	Դպրոցոիժւմ վերանորոգված է մարզադահլիճը	ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցումները բավարար չեն
7	Դպրոցում առկա է վերանորոգված ճաշարան	
8	Դպրոցն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, իսկ շենքը ջեռուցվում է կենտրանացված համակարգով, ապահովված է անհրաժեշտ ջերմաստիճանը	
9	Դպրոցն ունի առարկայական կաբինետներ, համակարգչային սենյակ	
10	Դասասենյակների հիմնական մասը վերանորոգված է	

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Իրականացնենք ուսումնադաստիարակչական աշխատանքների որակական վերլուծություն՝

2021-2022 ուսումնական տարի

Առարկաներ	Սովորողների թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ. դաս.	4-րդ դաս.	9-րդ. դաս.
Մայրենի	43		6,97		7,3	
Մաթեմատիկա	43		7,1		6,2	
Հայոց լեզու		36		5,61		13,4
Գրականություն		36		5,94		6,5
Հանրահաշիվ		36		5,8		13,3
Երկրաչափություն		36		5,86		
Հայոց պատմություն		36		5,86		6,2
Համաշխ. պատմ		36		5,97		
Հասարակա-գիտություն		36		6		
Հայ. եկ. պատմ.		36		5,8		
Ֆիզկուլտուրա		36		7,97		7,8
Ռուսաց լեզու		36		6,69		6,6
Անգլերեն		36		6,2		7,5
Ֆիզիկա		36		6,38		11,6
Կենսաբանություն		36		6,52		18
Քիմիա		36		6,83		
Աշխարհագրություն		36		6,5		13,3
Ինֆորմատիկա		36		6,3		

ՆԶՊ և անվտանգ գործ.		36		7,27		
Ընդամենը	43	36	7,06	6,32		10,4

2022-2023 ուսումնական տարի

Առարկաներ	Սովորողների թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Մայրենի	40		6,85		6,67	
Մաթեմատիկա	40		6,97		7,4	
Հայոց լեզու		42		5,66		13,8
Գրականություն		42		6,38		14,5
Հանրահաշիվ		42		6,09		13,7
Երկրաչափություն		42		6,14		
Հայոց պատմություն		42		5,83		12
Համաշխ. պատմ		42		5,83		
Հասարակա-գիտություն		42		6,1		
Հայ. եկ. պատմ.		42		5,85		
Ֆիզկուլտուրա		42		7,88		7,3
Ռուսաց լեզու		42		6,61		13,9
Անգլերեն		42		6,26		18,6
Ֆիզիկա		42		5,86		15,5
Կենսաբանություն		42		6,5		13,79
Քիմիա		42		6,8		
Աշխարհագրություն		42		6,92		13,3
Ինֆորմատիկա		42		6,69		

ՆԶՊ և անվտանգ գործ.		42		8		
Ընդամենը	40	42	6,91	6,43		13,6

Առարկաներ	Սովորողների թվի փոփոխություն		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների փոփոխություն		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների փոփոխություն	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Մայրենի	-7,0%		-1,7%		-8,6%	
Մաթեմատիկա	-7,0%		-1,8%		19,4%	
Հայոց լեզու		16,7%		0,9%		3,0%
Գրականություն		16,7%		7,4%		123,1%
Հանրահաշիվ		16,7%		5,0%		3,0%
Երկրաչափություն		16,7%		4,8%		
Հայոց պատմություն		16,7%		-0,5%		93,5%
Համաշխ. պատմ		16,7%		-2,3%		
Հասարակա-գիտություն		16,7%		1,7%		
Հայ. եկ. պատմ.		16,7%		0,9%		
Ֆիզկուլտուրա		16,7%		-1,1%		-6,4%
Ռուսաց լեզու		16,7%		-1,2%		110,6%
Անգլերեն		16,7%		1,0%		148,0%
Ֆիզիկա		16,7%		-8,2%		33,6%
Կենսաբանություն		16,7%		-0,3%		-23,4%
Քիմիա		16,7%		-0,4%		
Աշխարհագրություն		16,7%		6,5%		0,0%
Ինֆորմատիկա		16,7%		6,2%		
ՆԶՊ և անվտանգ		16,7%		10,0%		

գործ.						
Ընդամենը	-7,0%	16,7%	-2,1%	1,7%		30,8%

Ցուցանիշ	2021-2022 ուստարի		2022-2023 ուստարի	
	1-ից 4-րդ. դաս.	5-ից 9-րդ դաս.	1-ից 4-րդ դաս.	5-ից 9-րդ դաս.
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	32/167 19%	18/217 8%	17/153 15,1%	15/222 6,7%
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ըստ	63/167 37%	152/217 70%	67/153 59%	150/222 67,2%
Ավարտման գործակից՝ըստ կրթական աստիճանների	44/44 100%	36/36 100%	36/40 87%	41/41 100%
Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	-	-	-	-
Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտականհաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը	-	23 58,9%	-	14/42 33,3%
Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում	-	23/36 63,9%	-	23/42 54,8%
Ուսումնական տարվա ընթացքում տվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների	8	13	11/153 7,1%	7/222 3,1%

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	7/386 1,8%	0
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացածների թիվը և տոկոսը	1/386 0,2%	0
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	1/386 0,2%	0

Սերունդի ճիշտ դաստիարակությունը ապագայի մեր գրավականն է: Կարևոր է հենց դպրոցական նստարանից սերմանել բարու, գեղեցիկի, ազնիվի, հայրենասիրության, մարդասիրության, հոգևոր և ֆիզիկական արժեքների նկատմամբ վերաբերմունք: Այս գործընթացին նպաստում են դպրոցում կազմակերպվող բազմաժանր և բազմաբնույթ միջոցառումները, ֆլեշմոբերը, աշակերտական գիտաժողովները, հետաքրքրաշարժ վիկտորինաները, սպորտլանդիաները, սեմինար պարապմունքները, գրական-երաժշտական ցերեկույթները, թատրոն-ստուդիայի աշխատանքը, հանդիպում-ները արվեստագետների, հասարակական գործիչների և հոգևորականների հետ:

Հաստատությունում գրանցված ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը տվյալ ուստարում			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը, սովորողը (ները)	Ձեռնարկված միջոցառումը
-			

Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումն կանխարգելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները		
Ծրագիրը կամ միջոցառումը (նշել թեման)	Ամսաթիվը	Դասարանը
1.Կանխարգելիչ միջոցառումներ 2. «Դասը վարում է ոստիկանը» խորագրով հանդիպում-զրույց 3.Դասղեկի ժամեր «Ծխախոտը և պայքարը նրա դեմ» 4. Պայքար վնասակար սովորույթների դեմ	2022թ. 2022թ. 2023թ. 2023թթ	8-րդ, 9-րդ դաս. 7-8-րդ դաս. 7-9-րդ դաս. 6-9-րդ դաս.
Հաստատությունում գրանցված մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերը,		

դրանց բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված քայլերը			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը	Բացահայտմանն ու կանխմանն ուղղված քայլերը
Չի գրանցվել			

Հաստատությունում սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմները			
Դեպքը	Ամսաթիվ	Դասարանը, սովորողը(ները)	Բացահայտման, քննարկման մեխանիզմը, ձեռնարկված քայլերը և կանխարգելման ուղիները
Չի գրանցվել			

Ուսումնական հասատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ և մեխանիզմներ			
Միջոցառում	Ամսաթիվ	Մասնակիցները, դրանց թիվը	Առաջադրված մեխանիզմ
1. Ծնողական ժողովներ,	2022-2023	303	Տարեկան 8 ծնողական ժողովներ, զրույցներ, սոցհարցումներ
2.Սովորողների հիգիենայի պահպանման կանոնների մասին զրույց. գրիպի համա-ճարակից խուսափելու համար	Պարբերաբար	30-45	

Հաստատությունում կազմակերպված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվ	Դասարանը(ները)	Մասնակիցների թիվը
1. ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի	14.01.2023թ.	8-9-րդ	54

փոխանցման ուղիները			
2. Դաս-միջոցառում. Ինպե՞ս խուսափել ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ից:			
3.Ցուցապաստառների և քարտերի պատրաստում.«Ո՛չ ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի ն»			
2. Զրույց-հանդիպում ՀԿ ներկայացուցիչների հետ			
Ուսումնական հաստատության ստեղծած ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպած միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման,օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվ	Դասարանը(ները)	Մասնակիցների թիվը
1. Ոչ բռնություններին – հանդիպում ոստիկանների հետ	2023թ.	7-9-րդ	86 աշակերտ
2. «Թրաֆիքինգ. դրա հետևանքները»	12.03.2022թ.	8-9- րդ	29 աշակերտ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Դպրոցի մանկավարժական կազմի մասնագիտական որակները բնութագրող ցուցանիշները ներկայացված են 2022-2023 ուսումնական տարվա համար, քանի որ ներքին գնահատման հաշվետվության մեջ բացակայել է նախորդ տարիների ցուցանիշների համեմատությունը:

Ցուցանիշները	**2022-2023 ուստարի**
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	27/28 96%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը	28/28 100%
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	-
Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	-
Կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը	2
Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը	9 34,6%
Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը	-
Ուսուցիչների միջին տարիքը	48.2
Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը	28/28
Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը	28/28 100%

Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը	28
Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը	57
Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը	864
Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը,	12

Ցուցանիշները	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան /աճ կամ նվազում/
Մինչև 30 տարեկան	4	4	Անփոփոխ
31-40 տարեկան	6	5	Նվազում
41-50 տարեկան	5	5	Անփոփոխ
51-55 տարեկան	2	3	Աճ
56 տարեկան և ավելի	9	11	Աճ

Ցուցանիշները	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան/աճ կամ նվազում/
Ուսուցիչների ընդհանուր թիվը	26	28	Աճ
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը	20.1	19	Նվազում

Ուսուցիչներն ունեն մասնագիտական զարգացման հետևյալ կարիքները՝

- Առարկայական նոր չափորոշիչների ուսուցում,
- ՏՀՏ գործիքների ուսուցում և դրանք կիրառում դասապրոցեսի ընթացքում,
- Կամավոր ատեստավորումներին մասնակցություն,
- Գնահատման նոր ձևերի ուսուցում,
- Դասի ճիշտ պլանավորում:

ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Դպրոցը գործունեություն է իրականացնում ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում՝ իրականացնելով տարրական և հիմնական հանրակրթական ծրագրեր: Դպրոցի և համայնքի համագործակցությունը իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Համայնքի մասնակցել է դպրոցի կողմից անցկացվող միջոցառումներին,
- Համայնքը աջակցել է երեխաների դպրոց հաճախման նկատմամբ հսկողություն իրականացնելուն և ապահովել են կրթությունից դուրս մնացող երեխաների՝ դպրոց հաճախումը,
- Սովորողները մասնակցել են համայնքի կողմից կազակերպված միջոցառումներին՝ շաբաթօրյակ, ծառատունկ և այլն,
- Սովորողների կողմից համայնքի բնակչության համար կազմակերպվել են մի շարք միջոցառումներ:

Ուսումնական հաստատության մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը			
Նկարագրել հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն
1.Շաբաթօրյակներ	Գարուն, աշուն 2022-2023թթ.	90-95%	
2.Ծառատունկ	Գարուն 2023թ.	60-70%	
3. Մասնակցություն հուշարձանների միջազգային օրվան	2023թ.	95%	
4.Մասնակցություն համայնքում կազմակերպված շախմատի մրցումներին:	2022թ-2023թ	5%	
5. Մասնակցություն համայնքում կազմակերպված ասմունքի, երգի, պարի փառատոններին	2022թ. - 2023թ.	25-30%	
6.Մասնակցություն համայնքային շաբաթօրյակներին և ծառատունկին	2022-2023թթ.	90%	Տեղանքի մաքրում

Դպրոցը սերտ համագործակցում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի հետ, որի արդյունքում՝

- Հաստատվել է ծախսերի նախահաշիվները, տարեկան գնումների պլանը և դրանում կատարված փոփոխությունները,
- Հաստատվել է դպրոցի տարիֆիկացիոն ցուցակները և հաստիքացուցակները,
- Հաստատվել է դպրոցի կանոնադրությունը,
- Տնօրենը մասնակցել է մարզպետի աշխատակազմում կազմակերպված բոլոր խորհրդակցություններին և ժողովներին,
- Դպրոցի կողմից սահմանված ժամկետներում կատարվել են մարզպետի աշխատակազմի կողմից տրված հանձնարարականները, ներկայացվել են պահանջվող տեղեկատվությունները:

ՀՀ կառավարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընդունված իրավական ակտերի պահանջներին համապատասխան իրականացվում է դպրոցում ղեկավարումը և ուսումնական գործընթացի կազմակերպումը:

Դպրոցն համագործակցում է նաև՝

- ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ, որտեղ վերապատրաստումներ են անցնում մանկավարժները,
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետ, որտեղ իրենց գիտելիքներն են զարգացնում սովորողները,
- ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով աջակցում են ՏՄԱԿ աշխատակիցները
- Դպրոցն օգտվում է ԿՏԱԿ-ի կողմից կառավարվող թլեկտրոնային մի շարք հարթակներից,
- Քննությունների թեստերը ստանում է ԳԹԿ-ի միջոցով:

	ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1	Տաշիր համայնքի հետ համագործակցությամբ ապահովվում է բոլոր երեխաների կանոնավոր հաճախումները դպրոց	Համայնքի հետ հարաբերությունները կարող են ավելի սերտացվել, համայնքի կարիքների վերաբերյալ սովորողների իրազեկվածությունն ավելի մեծացնել
2	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի հետ առկա է սերտ համագործակցություն	Բարեգործական և հասարակական կազմակերպությունների առկա է թույլ համագործակցություն
3	Դպրոցը ղեկավարվում է կրթության կառավարման մարմինների սահմանած կարգերով	Այլ դպրոցների հետ համագործակցությունը կարելի է ընդլայնել
4	Առկա է համագործակցություն «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետ	
5	Դպրոցը համագործակցում է այլ կրթական հաստատությունների հետ, որոնց միջոցով բավարարվում են մանկավարժների մասնագիտական զարգացման կարիքները նպաստում են սովորողների կրթության որակի բարձրացմանը	
6	Առկա է համագործակցություն պետական այլ մարմինների հետ	

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Յուրաքանչյուր ամիս ծնողական խորհրդի ժողովի ընթացքում քննարկվում են հուզող հարցեր, կազմակերպվում են միասնական սեմինարներ, քննարկումներ, աջակցում են միմյանց կազմակերպվող միջոցառումների հարցում, կազմակերպվում են միասնական սոցհարցումներ ծնողների և աշակերտների շրջանում, համատեղ կազմակերպում են բարեգործական ակցիաներ, էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, համերգասրահներ և այլն:

Տվյալներ հաստատության ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	5 10%	6 50%
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	17	27
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը	0	0
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուս տարվա ընթացքում	5	8
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում	0	0
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.	72%	68%
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.dasaran.am, http://ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, matyan.am և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության	98%	98%

Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները	Ամսաթիվ
1. Էքսկուրսիաների թույլատրում	20222թ.-2023թ.
2. Անվճար դասագրքերի տրամադրում սոցանապահով աշակերտներին:	2022թ’

Ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ
1. էքսկուրսիա, արշավ	2022-2023թթ.
2. Այբբենարանի տոն	2022թ.
3. Գրքի տոնին նվիրված նվիրատվության համար գրքերի ձեռքբերում:	2023թ.
4. Վերջին դաս	2023թ.

Նկարագրել ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը	Ամսաթիվ
1. Սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներ:	2022-2023թթ.
2. Արձակուրդի ընթացքում սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպում:	2022-2023թթ.
3.Կարգապահություն, ուսումնադաստիարակչական հարցեր, միջոցառումների կազմակերպում, սոց. անա-պահովներին օգնություն:	2022-2023թթ.
4. Կազմակերպել էքսկ. և այց թանգարան	2022-2023թ.

Աշակերտական ինքնավար մարմնի՝ աշխորհրդի աշխատանքը կառուցվել է փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության և վստահության հիմքերի վրա: Ողջ ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են նորարարական գաղափարներ, հետաքրքիր ծրագրեր, որոնք, անշուշտ, փոխել են դպրոցի մթնոլորտը: Ցանկացած գաղափար քննարկվում է և ընտրվում են լավագույնները:

Տվյալներ հաստատության աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ			
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.			
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.	Ամսաթիվ	Աջակցություն ստացած սովորողների թիվը	Մեկնաբա-նություն
1.Օգնություն հետ մնացող աշակերտ.	2022-2023	28 աշ.	
2.Օգնություն հետ մնացող աշակերտ.	2022-2023	36 աշ.	
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները.՝ ներառյալ շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը			
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած վերոնշյալ միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբա-նություն
1. Թումանյանական օրերի կազմակերպում	2022թ	1-4 դաս.	
2. Գրքի տոնի կազմակերպում	2022-2023թ.	45 %	
3. «Սպորտլանդիա » բարձր դասարաններում	2022-2023թթ.	5-9 դաս.	
4. Ֆուտբոլ	2023թ.	11 %	

Դպրոցում գործում է նաև ըստ կարգի ձևավորված մանկավարժական խորհուրդ, որտեղ ներգրավված են բոլոր մանկավարժները: Մանկավարժական խորհուրդն իրականացնում է իր բոլոր լիազորությունները, որոնք սահմանված են կանոնադրությամբ:

Դպրոցում այս ուումնական տարում ձևավորվել է 4 առարկայական մեթոդական միավորումներ՝ բնագիտական, հումանիտար, տարրական և օտար լեզուների: Մեթոդական միավորումները կազմակերպել են օլիմպիադաններ, իրականացրել են առարկայական ուսումնասիրություններ, ԿԱՊԿՈՒ սովորողների համար մշակել են

առանձին ուսումնական ծրագրեր և իրականացրել են կանոնադրությամբ իրենց վերապահված այլ գործառույթներ:

	ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1	Մանկավարժական խորհուրդը լիարժեք իրականացնում է իր գործառույթները, իսկ տնօրենը իրականացնում է մանկավարժական խորհրդի աշխատանքների ղեկավարումը և ապահովվում է որոշումների կատարումը	Մանկավարժական խորհրդի աշխատանքներում ակտիվ են միայն մի քանի մանկավարժներ
2	Ծնողական խորհուրդը մասնակցում է սովորողների արտադպրոցական ուսուցման կազմակերպման աշխատանքներին	Սովորողների ուսումնական գործընթացին վերաբերող առաջարկությունների թիվը ծնողական խորհրդի կողմից փոքր է
3	Մեթոդական միավորումները չորս են, և յուրաքանչյուրն իր ուղղությամբ ամբողջապես կատարում է իր գործառույթները	Խորհրդակցական մարմինների աշխատանքային ներուժը կարիք ունեն համախմբման
4	Մեթոդական միավորումները ըստ անհրաժեշտության ուսուցիչներին ցուցաբերում են անհրաժեշտ օգնություն	
5	Աշակերտական խորհուրդը սահմանված կարգով գումարում է նիստեր, հանդես է գալիս նախաձեռնություններով	

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ
Համայնքի և կրթության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ սերտ համագործակցության ապահովում և սովորողների ընդգրկում համայնքային և այլ կազմակերպությունների հետ շփումներում, խորհրդակցական մարմինների դերի բարձրացում	Համայնքում դպրոցի դերի և հեղինակության բարձրացում, համայնքային ծրագրերում դպրոցի ընդգրկում	Կազմակերպել ուսումնական գործընթացը հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները և կարիքները	2024-2029 թվականներ, ուսումնական տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում, Սովորողներին իրազեկելու համար օգտագործել համակարգիչներ, տեսանյութեր, սյալդեր, ուսումնական այլ նյութեր, իրականացնել աշխատակազմի և համայնքի ուժերով
		Կազմակերպել միջոցառումներ սովորողների սոցիալական, առողջապահական շահերի պաշտպանությանն ուղղված՝ ներգրավվելով համայնքին և բնակչությանը	2024-2029 թվականներ, ուսումնական տարվա ընթացքում	Դպրոցի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, ունենալ միջոցառումների ծրագրեր, անհրաժեշտ սպորտային գույք, տեխնիկական միջոցներ և այլն, իրականացնել աշխտակազմի, սովորողների ուժերով

	Դպրոցի համագործակցության ամրապնդում կրթության ոլորտում գործող կազմակերպությունների հետ	Բավարարել դպրոցի կրթական կարիքները՝ մեկտեղելով կրթության ոլորտում գործող կազմակերպությունների հնարավորությունները և ռեսուրսները	2024-2029 թվականներ, ուսումնական տարվա ընթացքում, շարունակական	Դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներ, համակարգողի հետ աշխատանքներ տանել պայմանագրերի ստորագրման ուղղությամբ, իրականացնել տնօրենության ուժերով
	Խորհրդակցական մարմինների աշխատանքների ինտեգրում և փոխլրացում	Մասնակցել խորհրդակցական մարմինների նիստերին, հնարավորինս իրազեկել դպրոցի ընթացիկ գործունեության վիճակի մասին	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Ֆինանսավորում չի պահանջվում, ունենալ հանդիպումների օրակարգեր, քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումների, հրամանների նախագծեր, իրականացնել տնօրենության և խորհրդակցական մարմինների ուժերով
		Իրականացնել կրթական ծրագրեր միաժամանակ ներգրավվելով բոլոր խորհրդակցական մարմիններին	2024-2029 թվականներ, ուսումնական տարվա ընթացքում	Դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներ, ունենալ մշակված ծրագրեր, ՏՀՏ ռեսուրսներ, անհրաժեշտ ուսումնանյութական բազա,

				իրականացնել աշխատակազմի և խորհրդակցական մարմինների ուժերով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Որոշել սովորողների մասնակցության աստիճանը համայնքային միջոցառումներին և համեմատել նախորդ տարիների ցուցանիշների հետ:
2. Հաշվառել կազմակերպված միջոցառումների թիվը, և համեմատել նախորդ տարիների հետ, բացահայտել այդ միջոցառումներին համայնքային ներկայացուցիչների մասնակցության քանակը:
3. Համայնքի հետ համատեղ կրթական կամ սոցիալան բնույթի ինչ ծրագրեր են իրականացվում, ովքեր են այդ ծրագրերի շահառուները:
4. Համայնքում կան կրթություն չստացող սովորողներ, թե ոչ, ինչպիսին է վիճակը նախորդ տարիների համեմատությամբ:
5. Ինչ գործող պայմանագրեր են առկա կրթական ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ, նախորդ տարիների համեմատությամբ ինչ փոփոխություններ են կատարվել, ինչ ծառայություններ են մատուցվում:
6. Խորհրդակցական մարմինների նիստերին ինչ մասնակցություն ունի տնօրենը, քանի հարց է քննարկվել և մասնակցային որոշումներ ընդունվել են, թե ոչ:
7. Խորհրդակցական մարմիններն ինչ կրթական ծրագրերում են ընդգրկված, որոնք են նրանց մասնակցության ձևերը:

8. Արտադպրոցական, արտադասարանական ուսուցման կազմակերպման աշխատանքներում խորհրդակցական մարմինների ներգրավվածության ձևերը, իրականացված աշխատանքները:

	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Համայնքի կողմից դպրոցի կարևորության անտեսում և ոչ բավարար ուշադրության ցուցաբերում	Դպրոցը դարձնել նախաձեռնող օղակ, ակտիվացնել աշխատանքները ծնողական համայնքի հետ, այդ կերպ ավելացնելով շփումները համայնքի բնակչության հետ
2	Քիչ թվով սովորողների ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում	Միջոցառումները կազմակերպել հաշվի առնելով սովորողների նախասիրությունները, դրանց բացահայտմա ուղղությամբ իրականացնել ուսումնասիրություններ
3	Կրթության ոլորտում արդի պահանջմունքների բավարարմանն ուղղված ծառայություններ մատուցող ընկերությունների թվի նվազում	Իրականացնել շուկայի պարբերական մոնիթորինգ, ուսումնասիրել մատուցվող ծառայությունների տեսակները, որակը
4	Խորհրդակցական մարմիններում ոչ կոմպետենտ անդամների ընտրություն	Խորհրդակցական մարմիններում անդամների, նախագահների ընտրության ժամանակ մանրամասն ուսումնասիրել թեկնածուների հմտությունները, մասնագիտական գիտելիքները, կարողունակությունները

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ
Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի բարելավում	Դպրոցում համընդհանուր ներառական կրթության իրականացում, բազմակարծության խրախուսում, մասնակցային կառավարման իրականացում	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ստեղծել բարենպաստ միջավայր, ապահովել նրանց հնարավորինս ընդգրկումը ընդհանուր կրթական պրոցեսին	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներ, ունենալ ռեսուրս սենյակ, անհրաժեշտ նյութեր, ուսումնական այլ պարագաներ, իրականացնել աշխատակազմի և ՏՄԱԿ-ի աջակցությամբ
		Ստեղծել որոշումների կայացման թափանցիկ, բազմակարծիք և մասնակցային միջավայր, ապահովել այդ միջավայրի զարգացումը	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Ֆինանսավորում չի պահանջվում, ունենալ ընթացակարգ որոշումների ընդունման, իրականացնել տնօրենության ուժերով
	Բռնության, օտարման, հալածանքի դեմ պայքարի ռազմավարության	Ներդնել բռնության, օտարման, հալածանքի դեպքերին արձագանքման և	2024-2025 ուսումնական տարի	Ֆինանսավորում չի պահանջվում, ունենալ ռազմավարություն, իրականացնել

	մշակում	հետևանքների վերացման հստակ գործողությունների պլան		տնօրենության ուժերով
		Մեծ ուշադրություն դարձնել բռնության, օտարման, հալածանքի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացմանը	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Դպրոցի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, ունենալ միջոցառումների ծրագրեր, տեղակտվական նյութեր, պաստառներ, իրականացնել աշխատակազմի ուժերով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Սովորողներն ինչ նախաձեռնություններ են դրսևորել, և ինչ մասնակցություն են ցուցաբերել իրենց վերաբերյալ քննարկվող հարցերին:
2. Ծնողական համայնքի կողմից սովորողների կրթության որակի բարելավմանն ուղղված առաջարկություններ եղել են, թե ոչ, առաջարկություններ որ մասն է ընդունվել:
3. Դպրոցում ներառական կրթության կազմակերպման համար բավարար պայմաններ առկա են, թե ոչ:
4. ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողներն ինչ գնահատական ունեն ներառական կրթության կազմակերպման միջավայրի վերաբերյալ:
5. Որոշումների կայացմանն արդյոք մասնակցում են բոլոր շահառու կողմերը, թե միայն մի մասը:

6. Բազմակարծիք միջավայրի վերաբերյալ ինչ պատկերացումներ, գնահատականներ ունեն կրթական գործընթացի մասնակիցները:
7. Դպրոցում գործում է բռնության, օտարման, հալածանքի հակազդեցության և արագ արձագանքման համակարգ:
8. Ուսումնական տարվա ընթացքում բռնության, օտարման հալածանքի դեպքեր գրանցվել են, թե ոչ, ինչպիսի է վիճակը նախորդ տարիների համեմատությամբ:
9. Ինչ համագործակցություններ են առկա այլ մարմինների և գերատեսչությունների հետ՝ ուղղված բռնության, օտարման, հալածանքի դեպքերի կանխարգելմանը,
10. Դպրոցում համապատասխան վերապատրաստումներ անցած անձնակազմ առկա է, թե ոչ:
11. Սովորողների մասնակցության ձևերը բռնության, օտարման, հալածանքի կանխարգելման միջոցառումներին:

	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Ներառական կրթության կազմակերպման համար մասնագիտական թույլ կարողություններ ունեցող անձնակազմ, ոչ բավարար ուսումնանյութական պարագաներ	Կազմակերպել անձնակացման վերապատրաստման դասընթացներ, ներգրավվել առանձին նեղ մասնագիտական աշխատակազմ, համագործակցել ՏՄԱԿ-ի հետ, համակարգողին ներկայացնել ուսումնանյութական բազայի համալրման առաջարկություններ

2	Որոշումների միանձյա իրականացում	Կառավարման խորհրդի կողմից պարբերաբար իրականացնել դպրոցի մասնակցային միջավայրի գնահատում
3	Բարձր դասարանների սովորողների մոտ խնդիրների լուծման ոչ ստանդարտ մոտեցումների կիրառում, բռնության մեծ ռիսկ	Հատուկ վարքագծով աչքի ընկնող սովորողների հետ տանել լրացուցիչ աշխատանքներ, դասղեկական ժամեր հատկացնել բռնության, օտարման, հալածանքի կանխարգելման միջոցառումներին

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ
Աշխատակազմի ինքնակրթության հնարավորությունների զարգացում	Աշխատակազմի մասնագիտական զարգացմանն աջակցում	Աշխատակազմի համար պարբերաբար վերապատրաստման դասընթացների անցկացում ՏՀՏ գիտելիքների, նոր չափորոշիչների կիրառման հմտությունների ավելացման ուղղությամբ	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի, ըստ աշխատակազմի մասնագիտական զարգացման կարիքների	Դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներ, անհրաժեշտ է վերապատրաստման ծրագրեր, ուսումնական նյութեր, առցանց կապի միջոցներ, ՏՀՏ միևոցներ, կիարականացվեն վերապատրաստող կազմակերպությունների ուժերով և միջոցով
		Աշխատակազմին աջակցում նոր որակավորումների ձեռքբերման նախապատրաստական աշխատանքներում՝ կամավոր ատեստավորում, տարակարգ և այլն	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Ֆինանսավորում չի պահանջվում, անհրաժեշտ է ուսումնական նյութեր, ձեռնարկներ, գրքեր, հարցաշարեր, կիրականացվեն աշխատակազմի ուժերով
	Աշխատակազմին խրախուսում և արժևորում	Աշխատակազմի խրախուսման և արժևորման նպատակով	2024-2025 ուսումնական տարի	Ֆինանսավորում չի պահանջվում, օրենքներ, կարգեր, կիրականացվի

		գնահատման գործիքների սահմանում		տնօրենության ուժերով
		Աշխատակազմի պարբերական խրախուսում և արժևորում	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Դպրոցի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, անհրաժեշտ է պատվոգրեր շնորհակալագրեր, կիրականացվեն տնօրենության ուժերով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Կամավոր ատեստավորված քանի ուսուցիչ է դասավանդում դպրոցում, ինչ աճ է արձանագրվել վերջին տարիներին:
2. Մանկավարժները սեփական նախաձեռնությամբ մասնակցում են վերապատրաստման դասընթացների, թե ոչ:
3. Դպրոցում ինքնակրթության համար բավարար ուսումնական ռեսուրսներ առկա են, թե ոչ:
4. Ուսումնական հաստատությունից դուրս գործնական պարապմունքներ իրականացվում են մանկավարժների կողմից, թե ոչ:
5. Խրախուսման ինչ միջոցներ են կիրառվում դպրոցում:
6. Խրախուսման համակարգը թույլ տալիս է ճիշտ որոշել խրախուսման ենթակա մանկավարժներին:
7. Ուսումնական տարվա ընթացքում կանի հոգի է խրախուսվել:
8. Խրախուսման համակարգում նախատեսված են արդյունքների չափման հստակ գործիքներ, թե ոչ:

	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Մանկավարժների կողմից ինքնակրթության նկատմամբ ցածր հետաքրքրություն	Մեթոդական միավորումների կողմից ցուցաբերել աջակցություն մանկավարժներին մասնագիտական նոր կարողությունների, հմտությունների յուրացման գործում
2	Տարեց մանկավարժների կողմից որակավորման քննություններին մասնակցելու ցանկության բացակայություն	Երիտասարդ և տարեց մանկավարժների միջև ձևավորել փոխօգնության մթնոլորտ
3	Նյութական խրախուսումներ տրամադրելու համար ոչ բավարար միջոցների առկայություն	Արդյունավետ օգտագործել ֆինանսական ռեսուրսները, համագործակցել բարեգործական ընկերությունների, բարերարների հետ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ
Կրթության որակի բարելավում, չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպում	Ուսուցման գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառման ավելացում	Դասասենյակներում ապահովել բավարար պայմաններ ՏՀՏ միջոցների ամբողջական և լիարժեք օգտագործման նպատակով	2024-2026 ուսումնական տարիներ	Դպրոցի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, անհրաժեշտ է համակարգողին ներկայացնել առաջարկություններ, կիրականացվի տնօրենության ուժերով
		Վերահսկողություն սահմանել մանկավարժների կողմից ՏՀՏ միջոցների և այլ նորարարական գործիքների կիրառմամբ դասապրոցեսի անցկացման նկատմամբ	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր ուսումնական տարի	Ֆինանսավորում չի պահանջվում, անհրաժեշտ է իրականացնել դասալսումներ, կիրականացվի տնօրենության ուժերով
	Առարկայական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների,	Իրականացնել սովորողների գիտելիքների ստուգում, բացահայտել	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում, անհրաժեշտ է հարցաշարեր,

	կարողունակությունների, մնացորդային նվազագույն գիտելիքների ապահովում սովորողների մոտ	սովորողների ուսման արդյունքները և դրանց դինամիկան ուսումնական տարվա ընթացքում		առաջադրանքներ, խնդիրներ, հաշվետվությունների կազմմում, վերլուծում, կիրականացվի աշխատակազմի ուժերով
		Ավելացնել աշխատանքները ուսման ցածր արդյունքներ ունեցող սովորողների հետ, բարելավել կրթության որակը	2024-2029 թվականներ, յուրաքանչյուր կիսամյակ	Դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներ, անհրաժեշտ է ձևավորել երկարօրյա խմբեր, մշակել ծրագրեր, օգտագործել ուսումնական նյութեր, կիրականացվի աշխատակազմի ուժերով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Սովորողներն ապահովվել են չափորոշչով սահմանված վերջնարդյունքները:
2. Արձանագրվել է գերազանց առաջադիմություն ունեցող, համապետական մրցույթներին մասնակցող սովորողների թվաքանակի աճ:
3. Ուսուցման գործընթացը կազմակերպվում է չափորոշչային պահանջներին համապատասխան, սովորողները կարողանում են իրականացնել նախագծային աշխատանքներ:

4. Ուսուցիչները սովորողների ուսումնառության արդյունքների բնութագրման նպատակով օգտագործում են պարզ և հասկանալի, հստակ չափելի գործիքներ:
5. Ուսումնական գործընթացն առավելապես կազմակերպվում է ՏՀՏ միջոցների օգտագործմամբ, ինտերակտիվ մեթոդներով:
6. Երկարօրյա խմբերում ընդգրկված սովորողները կարողանում են կարճ ժամկետում ապահովել ցանկալի արդյունքներ:

	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Մանկավարժների կողմից ՏՀՏ և նորարարական միջոցներին տիրապետելու ոչ բավարար մակարդակ	Կազմակերպել վերապատրաստումներ, ցուցաբերել աջակցություն հետ մնացող մանկավարժներին
2	Սովորողների կողմից ցածր առաջադիմություն, ուսման նկատմամբ ոչ բավարար հետաքրքրություն	Ուսուցման գործընթացը կազմակերպել ժամանակակից մեթոդներով՝ հաշվի առնելով սովորողների նախասիրությունները